1. Բարեգործական որակել «Վորոլ վիժն ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2998243 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք, Սառնակունք և Քարահունջ համայնքների բուժկետերի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորոլ վիժն ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սմբատ Հայրապետյան» ԱԶ-ի հետ (ՀՎՀՀ՝ 47704313) 2013 թվականի ապրիլի 12-ին կնքված N WVA/SIS ADP/CW-13/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է


սանհանգուցների մասնակի վերանորոգում՝ 2998243 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորոլ վիժն ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



«Սյունիքի մարզի Գորհայք, Սառնակունք և Քարահունջ համայնքների բուժ. կետերի ֆինանսակի վերանորոգում»


Ծրագիր

1	Ծրագրի նպատակը	Աջակցել Գորհայք, Սառնակունք, Քարահունջ համայնքներին՝ բուժ. կետերի ֆինանսական պայմանները բարելավելու նպատակով:						
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:						
3	Բարեգործը	«Վորլդ Վիժն» Մեծ Բրիտանիա, հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR United Kingdom, tel. +44 1908 841000						
4	Ծրագիրը կատարողը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ (հասցե՝ Երևան, Ռ.Սելիբյան 1; ՀՎՀՀ 02528755):						
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորհայք, Սառնակունք, Քարահունջ համայնքները: Բնագավառը՝ սոցիալական						
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2998243 դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ «Վորլդ Վիժն» Մեծ Բրիտանիա: <table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <thead> <tr> <th style="text-align: left;"><u>Ցուցանիշներ</u></th> <th style="text-align: left;"><u>Համար</u></th> <th style="text-align: left;"><u>Ժամկետ</u></th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Շին վերանորոգման աշխատանքների իրականացում 2013թ.</td> <td>2000000 դրամ 998243 դրամ</td> <td>Երկրորդ եռամսյակ Երրորդ եռամսյակ</td> </tr> </tbody> </table>	<u>Ցուցանիշներ</u>	<u>Համար</u>	<u>Ժամկետ</u>	Շին վերանորոգման աշխատանքների իրականացում 2013թ.	2000000 դրամ 998243 դրամ	Երկրորդ եռամսյակ Երրորդ եռամսյակ
<u>Ցուցանիշներ</u>	<u>Համար</u>	<u>Ժամկետ</u>						
Շին վերանորոգման աշխատանքների իրականացում 2013թ.	2000000 դրամ 998243 դրամ	Երկրորդ եռամսյակ Երրորդ եռամսյակ						
7	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող են հանդիսանում Գորհայք, Սառնակունք, Քարահունջ համայնքները, առավելապես՝ համայնքների երեխաները, համաձայն համայնքների կողմից ներկայացված ծրագրի առաջարկի:						
8	Ծրագրի իրականացման տևողությունը	12 ապրիլի 2013թ. - 12 օգոստոսի 2013թ.						

0/10

9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Սյունիքի մարզի Գորհայք, Սառնակունք, Քարահունջ համայնքներում պետք է վերանորոգվի բուժ. կետերի սան-հանգույցները (պատերի և առաստաղի հարդարում և ներկում, դռների և պատուհանների փոխում, հատակների սալիկապատում, խողովակների և սանիտարական սարքերի փոխում): Այդ աշխատանքները իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցույթային կարգով ընտրել է շինարարական կազմակերպություն /«Սմբատ Հայրապետյան» ԱԾ/ և նրա հետ կնքել է պայմանագիր /WVA/SISADP/CW-13/001/: Շինարարական աշխատանքները կկատարվեն 2013թ. ապրիլի 12-ին և կավարտվեն մինչև 2013թ. օգոստոսի 12-ը:
10	Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Սյունիքի մարզի Գորհայք, Սառնակունք, Քարահունջ համայնքներում պետք է վերանորոգվի բուժ. կետերի սան-հանգույցները (պատերի և առաստաղի հարդարում և ներկում, դռների և պատուհանների փոխում, հատակների սալիկապատում, խողովակների և սանիտարական սարքերի փոխում): Աշխատանքների նախահաշվային արժեքն է 2998243 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), իսկ ըստ համայնքների՝ Գորհայք համայնքի բուժ. կետի սան-հանգույցի վերանորոգում 999412 դրամ Սառնակունք համայնքի բուժ. կետի սան-հանգույցի վերանորոգում 959339 դրամ Քարահունջ համայնքի բուժ. կետի սան-հանգույցի վերանորոգում 1039492 դրամ
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Սյունիքի մարզի Գորհայք, Սառնակունք, Քարահունջ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Ծրագրով նախատեսված է սան-հանգույցները վերանորոգումից հետո հանձնել վերոհիշյալ երեք համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին 15 տարի այն չօտարելու պայմանով:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերահսկողությունը իրականացվում է Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի գրասենյակի, Գորհայք, Սառնակունք, Քարահունջ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համապատասխան բաժինների կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային կարգիչների կողմից: Ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայանա ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման կենտրոնին:

Տնօրեն
 Գրահամ Սթրոնգ
 02 մայիսի 2013թ.



0/10



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
17 մայիսի 2013 թվականի N Մ- 359 -Ա
քաղ. երևան

**«ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ-
ՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՆԻ ԲԵՋԻԿՅԱՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱ-
ԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 3-ի N 3/3.8-1/5976-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի մայիսի 7-ի N 02/2580-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի մայիսի 7-ի N ՖԲ/ԱնՄ-5/3270-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի -ի N ՎՄ/3-4/5139-13 ու Երևանի քաղաքապետի 2013 թվականի մայիսի 15-ի N 02/16-26437 հ եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող՝ 285000000 դրամ արժեքով «Անի Բեգիկյան» երիտասարդական կենտրոն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից (ՀՀ, Գյումրի, Չարենցի 6, ՀՎՀՀ՝ 05513266) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.


«Թեքնո Քազա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00862438) 2013 թվականի ապրիլի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Թբիլիսյան խճուղի 19 հասցեում գտնվող տան վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 83296805 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Անարատ Հղության ՀԶ Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստանի
Մեծավորուհի Ջաննեթթ (քույր Արուսյակ)
Մաջոնյանի կողմից

«29» ապրիլի 2013թ


«ԱՆԻ ԲԵԶԻԿՅԱՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԾՐԱԳԻՐ

6/11

1	Ծրագրի նպատակը	Յորաքանչյուր տարի Տիրամայր Հայաստանի Կուսաստանի սաներից առնվազն 3-4 հոգի ընդունվում են Երևանի տարբեր ԲՈՒՀ-եր: Մովորելու ընթացքում սաներն ունենում են դժվարություններ Երևանում ապրելու հարցում: Մինչ այսօր նրանք ապրում են տարբեր քարերարների տներում և այդ պատճառով սեմեստրի ընթացքում նրանք հաճախ տեղափոխվում են տնից-տուն: Բացի դրանից ոչ միշտ են կացարանի պայմանները նպաստում սովորելուն: Ծրագրով նախատեսվում է ՏՀԿ սաների, ինչպես նաև՝ այլ մարզերից եկած անապահով ընտանիքների լավ սովորող առայժմ 20, իսկ հետագայում, լրացուցիչ նոր մասնաշենքը կառուցելուց հետո՝ մինչև 30 ուսանողների համար ստեղծել մի կենտրոն, ուր ուսանողները կապրեն ուսումնառության ընթացքում: Այնտեղ կստեղծվեն բոլոր կոմունալ-կենցաղային պայմանները, որպեսզի ուսանողները իրենց ուշադրությունը կենտրոնացնեն ուսման վրա:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	Ամբողջ ծրագիրը ֆինանսավորում է իտալահայ բարերար Ալեքո Բեզիկյանը:
4	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում Անարատ Հղության ՀԶ Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստանը (<i>հասցե՝ Գյումրի, Ե. Չարենցի 6, ՀՎՀՀ 05513266</i>):
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է Երևան քաղաք Թբիլիսյան 19 տուն հասցեում: Ծրագիրն առնչվում է սոցիալական և կրթական ոլորտներին:
6	Ծրագրի բյուջեն	<ul style="list-style-type: none"> արդեն գնված տան վերանորոգում-100 միլիոն դրամ կահավորում- 20 միլիոն դրամ նոր մասնաշենքի կառուցում-150 միլիոն դրամ նոր մասնաշենքի կահավորում-10 միլիոն դրամ Ընդամենը՝ 285*000*000 դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Ամեն տարի ծրագրից կօգտվեն Հայաստանի Շիրակի և Լոռու մարզերի, ինչպես նաև Վրաստանի հայաբնակ գյուղերի անապահով ընտանիքների 17-25 տարեկան մոտ 30 երիտասարդներ:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը շարունակական է, այժմ որակավորման է ներկայացնում 2013-2014 թվականներին իրականացվելիք ծրագիրը:



9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են. <ul style="list-style-type: none"> 2013թ. ապրիլ-օգոստոս ամիսներին՝ կենտրոնի վերանորոգում մոտ 100 միլիոն դրամ 2013 թ. օգոստոս ամիս՝ կահավորում, մոտ 20 միլիոն դրամ 2014թ. մարտ-հոկտեմբեր ամիսներին՝ նոր մասնաշենքի կառուցում մոտ 150 միլիոն դրամ 2014թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ նոր մասնաշենքի կահավորում՝ մոտ 10 միլիոն դրամ:
10	Չեղք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են. <ul style="list-style-type: none"> վերանորոգում, որի առաջին փուլի համար արդեն կնքվել է շինարարական կապալի պայմանագիր մրցույթի հաղթող «Թեքնո Քազա» ՍՊԸ-ի հետ: Պայմանագրի արժեքն է 83 296 805 դրամ վերանորոգում, որի երկրորդ փուլի համար կպահանջվի մոտ 16 միլիոն դրամ անհրաժեշտ կահույքի, կենտրոնի բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ կոմունալ-կենցաղային սարքերի ու սարքավորումների գնում: Նախատեսվում է առաջին Լտապում գնել մոտ 20 միլիոն դրամի կահույք, սարքեր ու սարքավորումներ: նոր մասնաշենքի կառուցում հարակից տարածքում, որի համար կրկին կհայտարարվի շինարարական կազմակերպության մրցույթ: Շինարարության արժեքը կլինի մոտ 150 միլիոն դրամ: նոր մասնաշենքի կահավորում անհրաժեշտ կահույքով և սարքավորումներով: Նախատեսվում է այս Լտապում գնել մոտ 10 միլիոն դրամի կահույք, սարքեր ու սարքավորումներ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրով կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Շիրակի մարզպետարանի, ինչպես նաև՝ Գյումրու և Վանաձորի քաղաքապետարանների հետ:
13	Միջոցառումների արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հիմնական վերահսկողությունը իրականացվում է ֆինանսավորող բարերարի կողմից: Այդ նպատակով նա պետք է ներգրավի ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային ասոցիատորների: Վերահսկողություն կիրականացվի նաև ՀՀ սոցիալական և աշխատանքի նախարարության, հարկային մարմինների և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի կողմից:



6/11



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
17 մայիսի 2013 թվականի N Մ- 360 -Ա
քաղ. Երևան

**«ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ-
ՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ
ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՄԱՐ ԶԻԱԲՈՒԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-1/6138-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի մայիսի 7-ի N 02/2579-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի մայիսի 7-ի N ՖԲ/ԱնՄ-5/5153-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի մայիսի 2-ի N ԴԴ/22/3208-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 6-ի N ՎՄ/3-4/5043-13 եզրակացություն-ները, **ո Ր Ո Շ ու մ է.**


1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Արոնցի 15, բն. 20, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող՝ 7014965 դրամ արժողությամբ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի համար ձիաբուծության հիմնադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00440841) 2013 թվականի ապրիլի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գոմի վերանորոգում, մանեժի կառուցում, թեքահարթակի և շվաքարանի կառուցում՝ 7014965 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽԱԳԱԿ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ծրագիր

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի համար ձիաբուժության կենտրոնի հիմնադրում»

1.	Ծրագրի նպատակը	Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղում գտնվող «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի համար ձիաբուժության կենտրոնի հիմնադրում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3.	Բարեգործը	STICHTING KOM OVER EN HELP հասարակական կազմակերպություն, Նիդրլանդներ Տնօրեն Պարոն KARST DE VRIES: Հասցե Post box 138-3860AC Nijkerk:
4.	Ծրագրի կատարողը	«Կամրջակ» սոցիալ բարեգործական հասարակական կազմակերպություն (իրավաբանական հասցե ք. Զ. Մարկավազի 129/5, աշխ. Կոդյունի 3-14/1 ՀՎՀՀ՝ 01003187, "ԷՅՉ ԷՍ ԲԻ ՍԻ Բանկ Հայաստան" ՓԲԸ - ՀՀ՝ 21700-003-064151-001 հեռ՝ 516-044, Ֆաքս՝ 56-13-03):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ, Նոր Խարբերդ գյուղ, «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ: Բնագավառը առողջապահական :
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում 7014965 դրամ :
7.	Բարեգործություն ստացողը	«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ (ՀՎՀՀ՝ 03801255 հեռ՝ 023660025, Մապիս ԱՇԻԲ բանկ ՀՀ-247290001004)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	26.04.2013-ից մինչև 30.08.2013թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական	Շինարական աշխատանքների իրականացման համար կնքվել պայմանագիր «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ ի հետ 7014965 (յոթ միլիոն տասնը չորս հազար ինը հարյուր վաթսուս

6/12

	միջոցների ծավալը	հինգ) դրամ արժողությամբ: Կատարվելու է գումի վերանորոգում, մանեժի կառուցում, թեքահարթակի և շվաքարանի կառուցում:
10.	Ձեռք բերվող, ներմուծվող, ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շինարական աշխատանքների իրականացման համար կնքվել պայմանագիր «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ ի հետ 7014965 (յոթ միլիոն տասնը չորս հազար ինը հարյուր վաթսուս հինգ) դրամ՝ արժողությամբ: Ներմուծում չի նախատեսվում:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը իրականացման ընթացքում համագործակցելու ենք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրինության կողմից և աշխատանքները կատարելուց հետո Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվի հաշվետվություն:

Տնօրեն՝ Բ. Աղամալյան

Բ

6/12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 մայիսի 2013 թվականի N Մ - 361 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի ապրիլի 25-ի N 3/3.8-2/5584-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 29-ի N ՎՄ/3-4/4593-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Ռուսաստանի քաղաքացի Վահրամ Հակոբյանի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված մանկական խաղահամալիրի (294 տեղ, 2144 կգ ընդհանուր քաշով, 385209 ռուսական ռուբլի արժեքով, ներառյալ 30000 ռուսական ռուբլի փոխադրման ծախսերը, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
17 մայիսի 2013 թվականի N Մ- 362 -Ա
քաղ. երևան**

**«ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱ-
ԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի ապրիլի 25-ի N 3/3.8-2/5577-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի ապրիլի 26-ի N ԴԴ/22/4714-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի ապրիլի 25-ի N ՖԲ/ԱնՄ-5/3062-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 29-ի N ՎՄ/3-4/4622-13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով ձեռք բերված և իր հասցեով ստացված հետևյալ խմբաքանակ բեռի (ծիավարության պարագաներ երեխաների ծիաբուծության համար՝ 52 կգ ընդհանուր քաշով, 6795 ԱՄԷ դիրհամ արժողությամբ լվացքի մեքենաներ՝ 1711 կգ ընդհանուր քաշով, 18293 եվրո արժողությամբ խոհանոցային պարագաներ շժանգոտվող մետաղից և սպասք մաքրելու ճիլովներ՝ 50.60 կգ ընդհանուր քաշով, 6246 ԱՄԷ դիրհամ արժողությամբ, ընդհանուր բեռնափոխադրման ծախսերը կազմում են 1000 ԱՄՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և անհատույց «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին հանձնելու ծրագիրը:

2. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն հանձնելու մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 մայիսի 2013 թվականի N Մ- 363 -Ա
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ
ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի ապրիլի 23-ի N 3/3.8-2/5492-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի ապրիլի 26-ի N ԴԴ/22/4715-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 29-ի N ՎՄ/3-6/4592-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված դեղորայքը և բժշկական պարագաները (21 տեղ, 8127 կգ ընդհանուր քաշով, 149888.52 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 7810 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



«Վորդ Վիժն Ինթերնեյշնլ» ՍԲԿ Հայաստանյան մասնաճյուղի կողմից
 С 12389 առ 16.04.2013 հայտարարագրով ԱՄՆ-ից ստացված բեռի
 ԲԱՇՆՄԱՆ ՑՈՒՑԱԿ (երկու կանտեյներ)

6/17.12

Կոնտեյներների համարներն են՝ GESU 448470-0, TGHU 808507-0:
 Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 133678.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային
 ծախսերը կազմում են 11278.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 19540.00 կգ, տեղերի քանակը՝ 48:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
 ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 մայիսի 2013 թվականի N Մ- 364 -Ա


քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
 ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
 ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N Մ-010-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
 ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԳ ՎԻՃԻ
 ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱ-
 ԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒԴ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 8-ի N 3/3.8-2/6306-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի մայիսի 6-ի N ՖԲ/ԱՆՄ-5/3311-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 7-ի N ՎՄ/3-4/5123-13 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Վորդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված մարզական կոշիկները (48 տեղ, 19540 կգ ընդհանուր քաշով, 122400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 11278 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 25-ի N Մ-010-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի երևանի քաղաքանկախ, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


Քանակ	Չափման միավոր	Նկարագրություն	Քաշը (կգ.բր.)	Գինը (ԱՄՆ դոլար)	Բաշխման վայրը, ԶԳ Կառավարության ԲԾԶԳ որոշումը
1440	զույգ	Մարզական կոշիկներ		13420.80	Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան)
1430	զույգ	Մարզական կոշիկներ		13327.60	Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Տավուշի տարածաշրջան)
1430	զույգ	Մարզական կոշիկներ		13327.60	Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան)
870	զույգ	Մարզական կոշիկներ		8108.40	Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան)

6/17.12

1370	զույգ	Մարզական կոշիկներ		12768.40	Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան)
1370	զույգ	Մարզական կոշիկներ		12768.40	Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գեղի տարածաշրջան)
1310	զույգ	Մարզական կոշիկներ		12209.20	Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան)
1360	զույգ	Մարզական կոշիկներ		12675.20	Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան)
1360	զույգ	Մարզական կոշիկներ		12675.20	Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան)

6/17.12

810	զույգ	Մարզական կոշիկներ		7549.20	Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան)
1599	զույգ	Մարզական կոշիկներ		14848.00	Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան)
			ԸՆԴԱՍԵՆԸ	19540.00	133678.00





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
17 մայիսի 2013 թվականի N Մ- 365 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N Մ-671-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(Մայր Աթոռ սուրբ Էջմիածին)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 3-ի N 3.1/3.8-2/5972-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 6-ի N ՎԱ/3-8/5050-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 5-ի «Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի կահավորում» ծրագրի մասին» N Մ-671-Ա (2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-852-Ա, 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1103-Ա, 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-071-Ա, 2012 թվականի մարտի 23-ի N Մ-212-Ա, 2012 թվականի հունիսի 8-ի N Մ-426-Ա, 2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-969-Ա և 2013 թվականի մարտի 15-ի N Մ-136-Ա որոշումների խմբագրությամբ) որոշման 1-ին և կից ծրագրի 6-րդ կետում բյուջեն դարձնել 373891784 դրամ (ծրագրի լրամշակված տարբերակը կցված է):

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի հասցեով ստացված՝ ստորև նշված բեռը ներմուծվում է սույն որշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում՝

ինքնահարթեցնող շինարարական շաղախ (904 տեղ, 23288 կգ ընդհանուր քաշով, 12245.2 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4000 եվրո, «Արարատյան» ՏՄ):

3. Սույն որոշումն ուղևորել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎՈՒԹ Է
ՍԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷՅՄԻԱԾՆԻ
ԿԱՐԶԱՏՆԵՏԵՍԱԿԱՆ ԲԱԾՆԻ ՏՆՕՐԵՆ
Տ. ՍՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
« 22 » 04 2013թ.


«Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի կահավորման լրամշակված
Ծ Ր Ա Գ Ր

6/17.22

1	Ծրագրի նպատակը	«Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի համար ներկրել և տեղադրել սարքավորումներ, կահույք և անհրաժեշտ շինարարական նյութեր՝ հիվանդանոցը ժամանակակից և բարձրակարգ պայմաններով ապահովելու նպատակով
2	Ծրագրի բարեգործական դրակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ԳՎՀԳ 04703401
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք. Երևան, Զանաքեռ-Չեյթուն համայնք, Գր. Ներսիսյան փողոց թիվ 19
6	Ծրագրի բյուջեն	373,891,784 ՀՀ դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Մայր Աթոռ և «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնը:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	25 հուլիսի 2011թ. – 31 մայիսի 2013թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է արտերկրից Հայաստան ներմուծել սարքավորումներ, կահույք և շինարարական նյութեր «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի նորոգման, կահավորման և տեխնիկական վերազինման համար: Այս ծրագրի շրջանակներում նոր բեռներ ստացվելու դեպքում դրանք կներկայացվեն որպես հարակից գործարք:
10.	Չեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Ներկրված ապրանքատեսակներն են 1) օդի ֆիլտր 13 հատ, 160 կգ, գինը 3,750.45 եվրո կամ 2,000,340 դրամ, ճանապարհածախսը 30,144 դրամ, մաքսատանը վճարված գումարը 23,100 դրամ, ձևակերպվել է ՄՓՓ Տ/Մ-ում, C4590, առ 27.05.2011թ.: 2) պրես-գրանիտ 600քմ, մինի հեռախոսակայան 1 հատ, պլաստիկ խողովակներ 922մ, պլաստիկ արմատուրա 385կգ, ընդհանուր քաշը 15475կգ, գինը 62,624 ԱՄՆ դոլար կամ 23,596,723.2 դրամ, մաքսատանը վճարված գումարը 32,500 դրամ, ձևակերպվել է Արարատյան Տ/Մ-ում, C15093, առ 27.05.2011թ.: 3) օգոնային, թթվածնային, աերոզոլային թերապիայի սարքավորումներ 210 հատ, 64.89 կգ, գինը 10000.2 ԱՄՆ դոլար կամ 3,694,273.88 դրամ, ճանապարհածախսը 312,160 դրամ, ձևակերպվել է ՄՓԵՆՍԱՓԱՄ Մ/Տ-ում, C6359, առ 07.07.2011թ.: 4) գրանիտ սալիկներ, շիշակներ, խառնիչային ծորակներ, կերամիկական լվացարաններ, լուսատուներ, 24060 կգ, գինը 66,619 ԱՄՆ դոլար կամ 24,902,848.39 դրամ, մաքսատանը վճարված գումարը 52,200 դրամ, ձևակերպվել է Արարատյան Տ/Մ-ում, C18323, առ 22.06.2011թ.: 5) յուղաներկ, ցեմենտ, սոսինձ 20500 կգ, գինը 9358.32 եվրո կամ 4,970,016.59 դրամ, ճանապարհածախսը 1,127,010 դրամ, մաքսատանը վճարված գումարը 31,500 դրամ, ձևակերպվել է Արարատյան Տ/Մ-ում, C17809, առ 17.06.2011թ.: 6) օգոնային, թթվածնային, աերոզոլային թերապիայի սարքավորումներ 90 հատ, 13.5 կգ, գինը 108 ԱՄՆ դոլար կամ 39,836.88 դրամ, ճանապարհածախսը 113,240 դրամ, մաքսատանը վճարված գումարը 6600 դրամ, ձևակերպվել է ՄՓԵՆՍԱՓԱՄ Մ/Տ-ում, C6242, առ 01.07.2011թ.:

6/17.22

- 7) ուղեգրգրեր 450քմ, 1800 կգ, գինը 22,500 ԱՄՆ դոլար կամ 8,226,450 դրամ, մաքսատանը վճարված գումարը 27,395 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C22713, առ 26.07.2011թ.:
- 8) Ուռլոզիական լաբորատորիայի սարք, բրուտտո քաշը 230 կգ, գինը 25,000 Եվրո կամ 12,979,500 դրամ, ճանապարհածախսը 668,719 դրամ, մաքսատանը վճարված գումարը 6000 դրամ, ձևակերպվել է «Չվարթոնոց» Մ/Տ-ում, C 16831, առ 02.11.2011թ.:
- 9) Երեսապատման սալիկներ՝ մանված գրանիտ, բրուտտո քաշը 21340 կգ, գինը 22,489.53 Եվրո կամ 11,247,914 դրամ, ճանապարհածախսը 1,223,475 դրամ, մաքսատանը վճարված գումարը 28,600 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C 31005, առ 28.09.2011թ.:
- 10) Գրանիտե սալիկներ, երեսապատման սալիկներ՝ պրեսգրանիտ, հեռախոսներ լարով, լուսատուներ, բրուտտո քաշը 11200 կգ, գինը 44,377 ԱՄՆ դոլար կամ 16,774,950 դրամ, մաքսատանը վճարված գումարը 27,400 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C 35146, առ 27.10.2011թ.:
- 11) Խոհանոցային և լվացքատան տեխնիկա, բրուտտո քաշը 5673 կգ, գինը 122,988.26 Եվրո կամ 64,723,802 դրամ, ճանապարհածախսը 4,727,595 դրամ, մաքսատանը վճարված գումարը 74,600 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C 37237, առ 10.11.2011թ.:
- 12) Պոմպ քրի բաղկացուցիչ մասերով, բրուտտո քաշը 722 կգ, գինը 5,744.1 Եվրո կամ 2,912,661 դրամ, ճանապարհածախսը 253,535 դրամ, մաքսատանը վճարված գումարը 11,500 դրամ, ձևակերպվել է ՄԾՍ S/Մ-ում, C 12346, առ 01.12.2011թ.:
- 13) Մետաղական բժշկական թթվածնային գազի բալոններ, բրուտտո քաշը 171 կգ, գինը 1,256.8 ԱՄՆ դոլար կամ 480,462 դրամ, ճանապարհածախսը 728,262 դրամ, մաքսատանը վճարված գումարը 6,500 դրամ, ձևակերպվել է ՄՓԵԱՍՓԱՄ Մ/Տ-ում, C 12948, առ 16.12.2011թ.:
- 14) Լուսարձակներ և լամպեր լույսի նեղ ուղղվածությամբ, բրուտտո քաշը 1,583 կգ, գինը 183,622 Եվրո կամ 92,336,159 դրամ, ճանապարհածախսը 382,430 դրամ, այլ ծախսերը 402,288, մաքսատանը վճարված գումարը 23,600 դրամ, ձևակերպվել է ՄԾՍ S/Մ-ում, C 13405, առ 22.12.2011թ.:
- 15) Երեսապատման կերամիկական սալիկներ, բրուտտո քաշը 20189 կգ, գինը 8,768.76 Եվրո կամ 4,419,893 դրամ, ճանապարհածախսը 1,708,800 դրամ, մաքսատանը վճարված գումարը 17,500 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C 44146, առ 29.12.2011թ.:
- 16) Բժշկական մահճակալներ, պահարաններ, սեղաններ, հենակներ, բրուտտո քաշը 9926.1 կգ, գինը 87,420 ԱՄՆ դոլար կամ 33,932,947 դրամ, ճանապարհածախսը 1,164,480 դրամ, մաքսատանը վճարված գումարը 29,400 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C 910, առ 16.01.2012թ.:
- 17) Երեսապատման կերամիկական սալիկներ, բրուտտո քաշը 20217 կգ, գինը 11,227.5 Եվրո կամ 5,780,591 դրամ, ճանապարհածախսը 1,654,400 դրամ, մաքսատանը վճարված գումարը 24,500 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C 3042, առ 09.02.2012թ.:
- 18) Բժշկական ձայնագրող սարքեր, մոնիտորներ, բրուտտո քաշը 39 կգ, գինը 15,306 Եվրո կամ 7,980,395 դրամ, ճանապարհածախսը 381.2 Եվրո կամ 198,754 դրամ, այլ ծախսերը 80 Եվրո կամ 41,711 դրամ, մաքսատանը վճարված գումարը 17,000 դրամ, ձևակերպվել է Չվարթոնոց Մ/Տ-ում, C 4335, առ 02.04.2012թ.:
- 19) Կապարյա դռներ, կապարյա պատուհաններ, մետաղյա հեղուներ և ամրակային դետալներ դռների և պատուհանների համար, բրուտտո քաշը 5008 կգ, գինը 74,076 ԱՄՆ դոլար կամ 30,442,273 դրամ, ճանապարհածախսը 2,350 ԱՄՆ դոլար կամ 965,756 դրամ, մաքսատանը վճարված գումարը 18,900 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C 29093, առ 22.08.2012թ.:
- 20) Լուսարձակի մասեր – 16 հատ, բրուտտո քաշը 18 կգ, գինը 880 Եվրո կամ 457,952 դրամ, մաքսատանը վճարված գումարը 7,500 դրամ, ձևակերպվել է ՄՖԵԱՍՓԱՄ Մ/Տ-ում, C 12827, առ 22.11.2012թ.:



		21) Ինքնահարեցվող շինարարական շաղակի - բրուտտո քաշը 23288 կգ, գինը 12,245.2 Եվրո կամ 6,635,062 դրամ, ճանապարհածախսը 4000 Եվրո կամ 2,167,400 դրամ, մաքսատանը վճարված գումարը 27,700 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C 4848, առ 19.02.2013.:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Հանագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է հանագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության, Առողջապահության նախարարության, Երևանի քաղաքապետարանի և «Այգեծոր» ՍՊԸ-ի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ կերտակողության մեխանիզմների մատարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

6/17.22



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 մայիսի 2013 թվականի N Մ- 366 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N Մ-065-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 6-ի N 3/3.8-1/5991-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 7-ի N ՎՄ/3-4/5133-13 եզրակացությունները, որ ո շ ու մ է.

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 6-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-065-Ա (2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-259-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2013 թվականի ապրիլի 23-ին կնքված N 069/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2000 լիտր «Ռեզոլյար» տեսակի բենզինի մատակարարում՝ մեկ լիտրը 450 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 մայիսի 2013 թվականի N Մ- 367 - Ա
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Այբ» կրթական հիմնադրամ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-1/6187-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 13-ի N ՎՄ/3-8/5252-13 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան 0009, Կորյունի փողոց 19ա) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա և 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջուլիանա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01547716) 2013 թվականի ապրիլի 19-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գնորդին սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներում նշված ապրանքների հանձնում՝ 908000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 մայիսի 2013 թվականի N Մ- 368 - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(Այբ» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-1/6228-13 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 13-ի N ՎՄ/3-
8/5253-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**


1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան 0009,
Կորյունի փողոց 19ա) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված
գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011
թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ»
ավագ դպրոց ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա և
2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ
հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

1) «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01547716) 2013 թվականի
ապրիլի 19-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քաղ.
Երևան, Թբիլիսան խճուղի 11/11 հասցեում 2 հատ մետաղյա փոշեներկված պահարանների
մատակարարում և տեղադրում՝ 140000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Մելինեթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00095867) 2013 թվականի ապրիլի 29-ին կնքված՝
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի 1-ին
հավելվածում նշված ապրանքների մատակարարում՝ 7147522 դրամի չափով՝ առանց
ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-
ություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 մայիսի 2013 թվականի N Մ- 369 -Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 26-Ի N Մ-289-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՔՐՈՆԻՄԵՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 3-ի N 3.1/3.8-1/5981-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 6-ի N ՎՄ/3-4/5046-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է:

1. Սահմանել, որ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-289-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Աշ և Արթուր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06941833) 2013 թվականի ապրիլի 15-ին կնքված N CCF-1-CT/1/2013 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 11730781 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 մայիսի 2013 թվականի N Մ- 370 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
29-Ի N Մ-195-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ
ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴԻՆ ԻՆՏԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 6-ի N 3/3.8-1/6131-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 6-ի N ՎՄ/3-4/4994-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 29-ի «Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Հատուկ կարիքներով երեխաների համար աղետների ռիսկերի նվազեցում» N Մ-195-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սպորտ Սիթի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02590297) 2013 թվականի ապրիլի 11-ին կնքված փոխանցման հաշվում նշված գործարքը, որով նախատեսվում է սպորտային պարագաների ձեռքբերում՝ 332500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱՐԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 մայիսի 2013 թվականի N Մ- 371 -Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ)**


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-1/6141-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի մայիսի 13-ի N ԴԴ/22/5341-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 7-ի N ՎՄ/3-4/5119-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.***

1. Սահմանել, որ «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2012 թվականի նոյեմբերի 15-ի N Մ-919-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Հանքոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04716703) 2013 թվականի ապրիլի 25-ին կնքված N 13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արմավիրի վերականգնողական կենտրոնի համար կահույքի պատրաստում՝ 1011955 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 մայիսի 2013 թվականի N Մ- 372 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-214-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

(Այբ» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Այբ» կրթական հիմնադրամի 2013 թվականի ապրիլի 17-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի ապրիլի 23-ի N 3/3.8-1/5457-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 26-ի N ՎՄ/3-4/4559-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Այբ» կրթական հիմնադրամ)» N Մ-214-Ա որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետում «6000000 դրամ» բառերը փոխարինել «7500000 դրամ» բառերով («Կետ Արքիթեքթ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագիր):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 մայիսի 2013 թվականի N Մ - 373 - Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1065-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 3-ի N 3/3.8-1/5955-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի մայիսի 2-ի N ՖԲ/ԱնՄ-5/3209-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 6-ի N ՎՄ/3-4/5058-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-1065-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

